ԻՆՏԵՐՆԵՏԻ ԼՐԱՀՈՍԻՑ*
ԱԹԱԹՈՒՐՔԸ ԳՈՌՈՒՄ ԷՐ՝ «ՄԱՐԴԱՍՊԱՆՆԵՐ»
(հարցազրույց Թաներ Աքչամի հետ)

Պատմությունը ցույց է տալիս, որ այն հերքելով հնարավոր չէ ձերբազատվել նրանից: Թերևս Թուրքիայի պետությունն իրեն հատուկ պատճառաբանություններով հերքում է Հայկական հարցի իրողությունը, որը թուրք հանրությանը որոշ չափով անհանգստություն է պատճառում: Մի կողմից աշխատում ենք մերժել հարցի գոյությունը. մի կողմից էլ՝ հետաքրքրվում ենք թե ի՞նչպիսին էր իրողությունը: Ի՞նչ եղավ 1915-ին, հարցի շրջանցումը դառնում է անհարին: Եթե փնտրենք այդ շրջանի Օսմանյան կայսերությունը կառավարող իթթիհատականներին արդարացնող պատճառները, բոլորս էլ նկատում ենք, որ իրականացել է մեծ ողբերգություն: Մենք մեզ համար փորձում ենք պարզել այն իրողությունը, որից, զգում ենք, փախուստն անհնարին է: Բարի, ի՞նչ էր իրականությունը: Գիտենք պետական պաշտոնական տեսակետը, բայց մինչ այսօր հնարավորություն չունենք մանրամասն իմանալու պետականից բացի այլ տեսակետներ և պնդում: Պատմաբան Թաներ Աքչամի հետ մենք զրուցեցինք հենց այդ ցավալի դեպքերի մասին, այն դեպքերի, որոնց մասին մենք չենք տեղեկացվել: Նա Հայկական հարցը հետազոտող առաջին գիտնականներից է, կատարել է լուրջ աշխատանքներ, հրապարակել է գրքեր, իր կատարած հետազոտությունների հետևանքով պետության կողմից ստացել է մեծ հակազդեցություն և չի կարողանում թուրքական համալսարաններում աշխատանք գտնել: Աքչամը պատմեց 1915թ. տեղահանության պատճառների, կոտորածների հրահանգների և այս հարցում Աթաթուրքի բացատրությունների մասին:

- Հայկական հարցի շուրջ Բողազիչի համալսարանում պետք է կազմակերպեիք գիտաժողով: Այսօր Ձեզ Արդարադատության նախարարը մեղադրում է մեր ներկա իշխանության մասին հրահրիչ ելույթների համար: Ինչո՞ւ հետաձգեցիք:

- Գիտաժողովը հետաձգեց Բողազիչի համալսարանը՝ իր տանտիրոջ իրավունքով: Հասկանում եմ համալսարանի այս կեցվածքը և ընդունում եմ հարգանքով: Մենք այստեղ ցույց չենք անում: Սա պիտի լիներ մի այնպիսի գիտաժողով, որի նմանները բազմիցս կազմակերպվում են արտասահմանում: Արդեն իսկ այն փաստը, որ Թուրքիայում մի խումբ մտավորականներ ունեցան համարձակություն նման մի գիտաժո-

* Տեղեկատվությունը վերցված է ինտերնետի թուրքական կայքերից:

ղով նախաձեռնելու, կարևոր իրադարձություն է: Սա թուրք մտավորականի պայքարն է: Որոհետև այս հարցերի շուրջ խոսվում է միշտ արտասահմանում: Եթե գիտաժողովն իրականանար, այնտեղ էլ կկարողանայինք խոսել:

- Դուք հա՞վատում եք, որ թուրքական պաշտոնական թեզիսը ամբողջությամբ չի համապատասխանում իրականությանը:

- Տեսե՛ք, բոլորը համաձայնում են մի հարցում. 1915թ. Իթթիհատ Թերաքքիի կառավարությունը ինչ որ բան ձեռնարկել է Օսմանյան այն ժամանակվա քաղաքացիների նկատմամբ, մի վայրից տեղահանվել, մի այլ տեղ են տեղափոխվել, ընթացքում՝ մի խումբ մարդիկ են մահացել: Պաշտոնական տեսակետի կողմնակիցներից մեկն ասում է. «Հայերը ևս սա արեցին»:

Բայց սա ցեղասպանության բանավեճի տեսանկյունից կարևոր չէ: Բոլորը կծիծաղեն սրա վրա: Կասեն. «Դու մեզ պատմում ես այն պատճառներից մեկը, որի պատճառով հայերին հավաքաբար սպանեցին»: Այլ կերպ ասեմ, ոչ մեկը անտեղի մյուսին չի սպանի: Հիտլերը սպանում էր ցեղապաշտ գաղափարախոսության, Ստալինը՝ քաղաքական, մյուսներն էլ՝ ապստամբության պատճառով: Այս պահին մենք Թուրքիայի պատմության շուրջ չենք բանավիճում:

- Ի՞նչի շուրջ ենք բանավիճում:

- Բանավիճում ենք լուրջ մի բարոյական արժեքի շուրջ: Պետությունն ունի՞ իրավունք իրեն սպառնալիք նկատած ժողովրդի մի խմբին՝ պատժել կոլեկտիվ պատիժով, եթե քաղաքացիների կարևոր մի մասը (անգամ եթե պետությունը չունենա նման նպատակ) մահանում է, պետությունը իրավունք ունի՞ սա անելու, կարելի՞ է բարոյապես պաշտպանել կոլեկտիվ պատիժը, բանավիճում ենք սրա մասին: Թուրքիայի պետությունն այսօր ասում է. «Այո, նման բաներ պատահել է, հարկ եղած դեպքում նորից կիրականացվի. նման բաներ պատահում են»:

Սա ասում եք ի՞նչին հենվելով: Պետությունը պաշտոնական թեզիսում չի՞ ասում, որ «...եթե փոխադարձ սպանություններ են իրականացվել, սա փոխադարձ կոտորած է (mukatele)»:

Ի՞նչի համար աքսորվեցին Ադրիանապոլսի հայերը: 1915թ. օսմանյան հողերում ապրող հայ բնակչությանը, ամբողջ Անատոլիայից հավաքելով որոշ վայրեր տեղափոխեցին: Պաշտոնական թեզն ասում է. «Տեղափոխվելու պատճառն Արևելյան Անատոլիայում հայերի հետ իրականացած բախումներն էին»: Ասել է թե՝ Արևելքի հայերը կտրեցին թուրք բանակի գծերը, ետևից խփեցին բանակին, այդ պատճառով էլ Օսմանյան պետությունն ամբողջ հայերին, ներառյալ Արևմտյան Անատոլիայի հայերին, կոլեկտիվ ձևով պատժելով, քշեց Սիրիա: Ասել է թե՝ երկրի որևէ վայրում մի խումբ ժողովուրդ պետությանը պրոբլեմ ստեղծելու դեպքում, պետությունն այդ ցեղախմբի բոլոր անդամներին, քաղաքացիներին մի տեղից այլ տեղ կարող է տեղափոխել. արդյունքում մի խումբ մարդ կարող է մահանալ, և այստեղ չկա ոչ մի զարմանալի բան: Թուրքիայի պետությունն իր «mukatele» ասած բախումներն օգտագործում է իբր տեղահանման պատճառաբանություն և ասում, թե Անատոլիայի բոլոր հայերին պատժելը ճիշտ էր, և պետությունը պատժելու իրավունք ունի: Մինչդեռ [այս դեպքում]

«mukatele» չկա: Դրա մասին կան փաստաթղթեր: Չի եղել սիստեմատիկ և համակարգված որևէ հայկական ապստամբություն: 1919թ. պաշտոնական թեզին մոտ կանգնած դատախազը Յոզղաթի դատավարությունում ասել է. «Հայերը Վանում՝ այստեղ-այնտեղ ապստամբեցին: Ռուսների հետ համագործակցեցին, բայց ոչ մի պետություն չի կարող աչք փակել այս դեպքերի հետ առնչություն չունեցող՝ Անատոլիայի տարածքի ամբողջ հայությանը քշելով՝ բնաջնջման փաստի առջև: Սա օրինական չէ»:

- Եթե կայանար Բողազիչիի կոնֆերանսը, ի՞նչ օգուտ կունենար:

- Մարդիկ պիտի իմանային, որ որոշ հարցում մարդիկ այլ կերպ են մտածում: Հարկավոր է գիտենալ, որ Թուրքիայում այժմ ընդհանրապես խոսվում է մինչ այդ չխոսված շատ բաների շուրջ: Թուրքիայի մարդիկ թող պատրաստ լինեն այն բաները լսել, որոնք իրենց դուրը չի գալու: Սրանք շատ ցավալի պատմություններ են:

Ասվում է, որ նույն ցավալի պատմություններն ապրել են նաև մուսուլմանները, և հայերի կողմից իրագործվել է հավաքովի կոտորածներ:

Ում կողմից էլ, ինչ պատճառաբանությամբ էլ իրականացված լինեն դրանք, պատմության այս տեսակի սպանությունների մասին հարկավոր է բացեիբաց խոսել: Արտաքուստ քողարկելը օգուտ չի տա պետությանը: Մենք՝ գիտնականներս, չենք ասի՝ հայերը թուրքերին սա արեցին, թուրքերը՝ հայերին դա: Սպանելիս թուրքերը կամ հայերը չեն սպանում: Սպանողը Իթթիհատ Թերաքքին է, Թեշքիլաթը Մահսուսան (հատուկ կազմակերպություն), եթե բանակի զորամասը կատարել է բանակի խմբավորում, օրինակ՝ եթե Մալաթիայում Քոռ (կույր) Աղայի աշիրեթն է, ապա դա կատարել է աշիրեթը: Հարկավոր է սպանողին մատնանշել: Որովհետև գիտենք, կային ուրիշներ էլ, որոնք հայերին իրենց տներում պահեցին, ազատեցին, այդ թվում՝ նաև սպաներ: Ո՞չ մի պատմական դեպք չի կարող նման ձևով մեկնաբանվել, իբր. «եկան, իրար հետ բախվեցին»: Թշնամությունը կշարունակվի, եթե ասեք. «Թուրքերի և հայերի միջև պատերազմ կար»:

- Ստույգ ի՞նչ եղավ 1915թ.:

- Իթթիհատ Թերաքքի կուսակցությունը որոշում էր կայացրել էապես լուծել Հայկական հարցը: Արդեն Թալիաթի 1915թ. մայիսի 26-ի՝ վարչապետարան գրած պաշտոնական նամակում նշվում է սա. 1915թ. Իթթիհատ Թերաքքիի կողմից հայերի աքսորի և սպանությունների որոշում կայացնելու պատճառները պատերազմի պայմանները չէին:

Այսինքն՝ պատերազմի պատճառով աքսորը և մահվան որոշումը, իբրև ռազմական նախազգուշություն, կայացած չէր: Իրենց անհանգստացնողը՝ Հայկական հարցն արմատապես լուծելու պահանջն էր:

- Ո՞րն էր իթթիհատականների նպատակը:

- Իթթիհատ Թերաքքին կարծում էր, թե հայերը խոշոր սպառնալիք են պետության գոյության համար և որ հայերի բնաջնջումով կարելի է պահպանել Արևելյան Անատոլիան: Անատոլիայի ոչ մուսուլմանների՝ էթնիկական մաքրազտման իմաստով՝ վերացման, հեռացման անհրաժեշտության մասին որոշումներն ընդունվել էին դեռևս 1914թ.: Քուշչուպաշը Էշրեֆը, Հալիլ Մենթեշը և Ջելալ Բայարն իրենց հուշերում նշում են, որ Անատոլիան ոչ թուրք տարրերից ազատելու ուղղությամբ մանրակրկիտ

ծրագրեր են պատրաստվել, և այս ծրագրերն առաջին անգամ օգտագործվել են Էգեական տարածաշրջանում՝ հույների դեմ: Ասել կուզի՝ գոյություն ուներ ծրագիր՝ ոչ մուսուլմաններին Անատոլիայից հեռացնելու միջոցով Անատոլիան միատարր դարձնելու մասին: Այս ծրագրի շրջանակներում բնաջնջման պրոցեսի մեջ մտցվեցին Արևելյան Անատոլիայի հայերը: Պատճառը՝ Բալկանյան պատերազմն էր: Այս պատերազմում մենք մեկ շաբաթվա ընթացքում կորցրեցինք տարածքի և բնակչության 60%-ից ավելին: Բոլորի աչքերը սևեռվեցին Անատոլիայի վրա: 1912թ. Դաշնակցությունը ջնջեց Իթթիհատ Թերաքքի կուսակցության հետ իր ամեն տեսակի դաշինքը: Թուրքիայում պատմության մասին խոսելիս թուրքերն ասում են՝ թուրքերը՝ մի կողմ, հայերը՝ այլ կողմ: Մինչդեռ հայերի՝ Դաշնակցություն կուսակցությունը մինչև 1912թ. Իթթիհատ Թերաքքիի կոալիցիոն կառավարության կազմում էր: Դաշնակցությունը Բալկանյան պարտությունից հետո, տեսնելով իրեն խոստացած բարեփոխումների, խոստումների չիրականանալը, արտաքին աջակցություն փնտրեց արևմտյան երկրներից:

- *Ինչի՞ համար էր փնտրում օժանդակություն:*

- Դաշնակցությունը ցանկանում էր Արևելյան Անատոլիայի տարածաշրջանում կառավարական և քաղաքական բարեփոխումներ կատարել: Տեսեք՝ 1800-ականների կեսերից սկսած Հայկական հարցը, ըստ էության, «հողի հարց» է: Հայ բնակչության մեծամասնությունը ապրում էր Արևելքում: 90%-ը աղքատ գյուղացիներ էին: Արևմուտքում եղածներն ավելի շատ արհեստավոր և առևտրականներ էին: Աղքատ գյուղացիների ամենամեծ հարցը քրդերի կողմից իրենց հողերի շարունակ բռնագրավումն էր: Սա քրդերի և չերքեզների հարձակմանը ենթակվող հայ գյուղացիների Օսմանյան պետության կողմից անվտանգության երաշխավորման հարցն էր: Դաշնակցությունը տեսնելով, որ բարեփոխումներ չեն իրականանալու, փափագեց այլ պետությունների օգնությունով ծնկի բերել Իթթիհատ Թերաքքիին, և դա հաջողվեց: 1914թ. ստորագրվեց Հայկական բարեփոխումների համաձայնագիրը, ըստ որի, Արևելյան Անատոլիան բաժանվում էր երկու վիլայեթների, իսկ կառավարումը կատարվում էր քրիստոնյաների և մուսուլմանների մասնակցությամբ: Երկու օտար մարզպետ (վալի) էր նշանակվելու և նշանակվեց:

- *Արևելքում հայ բնակչությունը մե՞ծամասնություն էր:*

- Հայերը, բացի Վան քաղաքի կենտրոնից, ամեն տեղ փոքրամասնություն էին կազմում, և սա քաջ գիտակցելով Դաշնակցությունը երբևէ չպահանջեց անկախ պետություն: Բայց Օսմանյան պետությունը սա ընկալեց դեպի անկախ պետությանն ուղղված առաջին քայլ: Ասեցին. «Նորից բեմադրվում է հին խաղը: Մենք Բալկանները կորցրեցինք բարեփոխումներ ասելով. հիմա այստեղ էլ կորցնելու ենք»: Եվ Իթթիհատ Թերաքքին Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելով անժամկետ հետաձգեց սույն բարեփոխումների ծրագիրը: Բայց որոշ ժամանակ անց սկսվեց Թեշքիլաթը Մահուսայի կովկասյան պարտությունները: Այս պարտություններում հայ զինյալ խմբերը կարևոր դեր ունեին: Հետո իրականացավ Սարիղամիշի աղետը՝ մեր Արևելյան ճակատը քայքայվեց: Այս

պարտության պայմաններում արմատական թուրքիզմը գրավեց Իթթիհատ Թերաքքիի իշխանությունը: Որպես օրինակ՝ Բահաիթթին Շաքիրը, բժիշկ Նազրմը, Զիյա Գյոքալպը, Թալիաթ փաշան թուրքիզմը, ընդհուպ մինչև ցեղապաշտության աստիճանի, պաշտպանող կադրեր էին:

- Ըստ Ձեզ կայացվել էր ցե՞ղասպանության որոշում:

- Այո՛: Ոչ՝ ըստ ինձ, այլ ըստ Օսմանյան վավերագրերի: Իթթիհատականները տեղահանության որոշումն ընդունելիս, ընդունեցին, հավանաբար, բնաջնջման որոշումը ևս: Որոշ շրջաններում սահմանափակ քանակի մարդկանց հնարավորություն ընձեռնվեց մուսուլման դառնալով ազատվել տեղահանությունից և սպանդից: Բայց երբ դրանց թիվը շատացավ, Թալիաթ փաշան հրահանգեց քշել անգամ մուսուլման դարձած լինելու դեպքում: Բնաջնջման որոշման կայացումը պարզ է դառնում, երբ կողք-կողքի են դրվում փաստաթղթերը: Որպես օրինակ. Ռեշիթ Աքիֆ փաշան 1918թ. նոյեմբերի 21-ին Օսմանյան Ազգային ժողովի իր ելույթում ասում է. «Կառավարությունում պաշտոն կատարելիս ներքին գործերի թղթերում ինձ տարօրինակ թվացող մի բան տեսա: Տեղահանման հրահանգ է տրվել և այս հրահանգին զուգահեռ հրոսակախմբերին ուղարկվել է սպանելու հրահանգ»: Մի շարք այլ փաստաթղթերից գիտենք, որ Իթթիհատ Թերաքքին, Թալիաթ փաշայի հրահանգով ներքին գործերի միջոցով վալիներին ուղարկեց տեղահանման որոշումը: 1915թ. ապրիլի 24-ին առաջին տեղահանման հրահանգին զուգահեռ շրջաններին Իթթիհատ Թերաքքիի կուսակցության քարտուղարների (katib-i mesuller) միջոցով ուղարկվեցին սպանության հրահանգներ: Կուսակցությունը Բահաիթթին Շաքիրին ենթակա Թեշքիլաթը Մահսուսի միավորումներով համակարգեց սպանելու գործը: Սա ասում են՝ Քասթամոնուի Վալի Ռեշիթ Բեյը, Եոզղաթի մութասարըֆ Ջելալը, Անկարայի վալի Մահզար Բեյը առանձին-առանձին:

Բանակի հրամանատար Վեհիպ փաշան, Տրապիզոնի զինկայանի հրամանատար Ավնի փաշան ասում են, որ կատարվածները սպանդ են եղել և հայտնում, որ սա կապ չունի թրքության և մուսուլմանության հետ: Ազգային ժողովի անդամ և իթթիհատական Հաֆըզ Մեհմեթը ասում է. «Իմ աչքերով տեսա՝ Սամսոնում անվերջ լցնում էին նավակները և սպանում՝ ծով թափելով: Թալիաթի հետ խոսեցի, բայց չկարողացա արգելք հանդիսանալ»: Ընդհանուր համակարգողը Թալիաթ փաշան էր: Իր տան հատուկ հեռագրային գործիքով կատարվեց այդ ամբողջ գործողությունը:

- Իսկ ի՞նչու է Թուրքիայի հանրապետությունը 2005 թվականին իր վրա վերցնում իթթիհատականների 1915թ. մեղքերի ժառանգությունը:

- Թուրքիայում իշխանությունը դեռ գտնվում է Իթթիհատ Թերաքքիի կուսակցության ավանդույթի, բյուրոկրատիայի և զինվորականության վերահսկման ներքո: Եթե այսօր Աթաթուրքը լիներ, չէր պաշտպանի 1915թ. կատարվածները: Եթե պետությունն այն քաջությունն ունենար, ինչպես Մուսթաֆա Քեմալը 1919-20-ականներին, եթե կարողանար այդ վարքագծով շարժվել, այսօր շատ բաներ այլ կերպ կլիներ: Մուսթաֆա Քեմալը 1920թ. ապրիլի 24-ին Ազգային ժողովում իր ելույթում այս գործողությանը բնութագրում էր որպես անցյալին պատկանող մի աղետ, շատ վատ մի դեպք: Մի ռադիո-ելույթում նա ասել է. «Ես երաշխավորում եմ, որ նորից չի

կրկնվի հայկական փոխադարձ կոտորածի (?) նման մի աղետ»: Թուրքիայում ցեղասպանություն բառն առաջին օգտագործողը ես չեմ: Աբաթուրքի ընկեր Ֆալիհ Ռըֆքը Աբայն է: Նա 1968թ. «Դունյա» (Dünya) թերթում 1915թ. կապակցությամբ ասաց. «Սա գենոցիդ է»: Նա պատմեց նաև Աբաթուրքի հետ կապված իր մի հուշը: Աբաթուրքը 1915թ. օթևանում էր Հալեպի «Բարոն» հյուրանոցում: Այնտեղ տեսնում է հայերի տեղակայման հարցերով զբաղվող Չերքեզ Հասան Ամջային: Աբաթուրքը նրան տեսնելիս բարկանում, գոռում է. «Մարդասպաններ... բոլորդ թիկունքում սպանելու համար հայ փնտրող մարդասպաններ եք, ոչ մեկդ ճակատ գալով չեք կռվում»:

1915թ. օսմանցիների վրա մեծ ազդեցություն ուներ Գերմանիան: Այստեղ էին գտնվում Գերմանական գլխավոր սպայակույտի գեներալներ և սպաներ:

- Ի՞նչպիսին էր հայկական եղեռնի հարցում այն ժամանակ գերմանացիների դիրքորոշումը:

Աչք փակեցին և աջակցեցին: Գերմանիայի վարչապետն իր հուշագրությունում գրել է. «Մեզ համար կարևոր է թուրքերին կանգուն պահել. եթե հայերը կործանվել են, դա մեր հոգսը չէ»: Թալիաթ փաշան նշում է, որ տեղահանման գաղափարը տվել են գերմանացի գեներալները: Չնայած տեղահանության քաղաքականությունը օսմանցիների մոտ հնուց ի վեր օրակարգում էր, բայց գերմանական ներքին պետությունը (derin devlet), զինվորականությունը, բնաջնջման գործին հավանություն տվեց, Էնվերի գլխավոր սպայակույտին մոտ կանգնած գերմանացի որոշ սպաներ փաստաթղթեր ստորագրեցին, որոշ մասն էլ Բաղդատի երկաթգծի հայ բանվորներին աքսորելու հրահանգ արձակեցին, այն դեպքում, երբ գիտեին, որ նրանք սպանվելու են: Գերմանական արտաքին գործոց նախարարությունը հակազդեց այս որոշմանը, բայց բանակը սույն սպաներին պաշտոնից չազատեց:

- Կա՞ր մեկը, որ իթթիհատականներին չասեր հրահրող, թեկուզ և՝ քաջալերելով հայերի սպանության հարցում:

- Սա մեծ մասամբ Իթթիհատ Թերաքքիի քաղաքականությունն էր: Իրագործեցին այն պահին, երբ տեսան, որ դրսից լուրջ միջամտության բացակայությունը երաշխավորված է: Ստամբուլի ոստիկանապետ Բեդրին իր օրատետրում գրել է. «Մենք 1914թ. տեսանք, որ արտաքին ուժերը ոչ մի բան չեն կարող անել, և սա մեզ համար հանդիսացավ կարևոր բանալի»: Իթթիհատականները օգտագործեցին նաև շրջանների մուսուլման ժողովրդի մոտ գյավուրների հանդեպ թշնամանքի գաղափարը: Քաղաքի մուսուլման ժողովրդին սպանելու և կողոպտելու դրդելով, նրանք աշխատեցին նրանց ևս մեղսակից դարձնել: Սպանությունների համար օգտագործվում էին որոշակի վայրեր: Ընդհանրապես, ժանդարմները սպանելու համար հայերին շրջանների քրդական աշիրեթներին էին հանձնում:

- Եթե Թուրքիան ընդունի հայերի հավաքաբար սպանությունները, դրան հե՞տևելու է փոխհատուցման պահանջը:

- Հողային պահանջներ չկան, բայց փոխհատուցման պահանջ կարող է առաջանալ: Հարկավոր է պատրաստ լինել: Պետք է հարցը փոխ-

հատուցելի՝ փողի, վեճի վերածել: Թուրք-հայկական լարվածությունում Օսմանյան կայսերության քայքայման շրջանում Եվրոպան լուրջ դեր ուներ տարբեր էթնիկական խմբերին՝ միմյանց սպանության դրդելու հարցում: Կարող է հիմնադրվել ֆոնդ, որը հնարավորություն կստեղծի խորհրդանշական ձևով փոխհատուցել պահանջները: Բայց փոխհատուցման պահանջը նաև քարոյական է: Հայկական մշակույթի վերահաստատումը, որպես օրինակ՝ Անիի ավերակների վերականգնումը, իբրև փոխհատուցման պահանջի մաս կարող է հանդիսանալ:

Հարցազրույցը վարեց՝ ՆԵՇԵ ԴՅՈՒԶԵԼԸ

Թարգմանությունը՝ ԿԱՅԾԱԿ ՄԱՐՄԱՐՅԱՆԻ